

1852

h - 56

4997-5005

28

z - 56


2010


Unif 996

84

1

#2001





1. Օքարթիր հոգիս ուրախ երգով ,  
քու մեծ Փրկիչո օքչնէ փառքով .  
զոր իրաւամք ինէ կուղէ ,  
ոչ , իր սէրը ինչ առատ է :
2. Օիս կործանած ինկած տեսաւ ,  
բայց սիրելէն չե դաղըեցաւ .  
զիս կորսրվածս ինքը փրկեց ,  
ոչ , իր սէրը որչափ է մեծ :
3. Օօրք թշնամեաց՝ Երկիր՝ Դժոխք ,  
թէւ ճամբուս են խախանողք .  
ինքն է անվտանդ հոգիս տանող ,  
ոչ , իր սէրը ինչպէս ազգող :
4. Երբ նեղութիւնք մութ ամպի պէս ,  
կը որոտան յոց սաստկապէս .  
ինքն միշտ հոգիս կըպաշտպանէ ,  
ոչ , իր սէրը ինչ բարի է ,
5. Շատ հեղ կըզգամ իմ չար սիրտէս ,  
որ հեռանալ կուղէ Փրկչէս .  
թէպէտ շատ հեղ զինքը մոռցայ ,  
ոչ , իր սէրը միշտ կըմնայ :
6. Շուտով որ մութ ձորէն անցնիմ ,  
բոլոր ուժէս որ լքանիմ .  
վերջին շունչիս հաճեաց Տէր իմ ,  
որ քու սիրոյդ երգով մեռնիմ :
7. Ելլալ ՚ի վեր ունիմ ես տենչ ,  
ան լուսախայլ աշխարչն անվերջ .  
բերկրիմ երգեմ ՚ի լոյս անշէջ ,  
ոչ , քու սէրըդ Երկինքին մէջ :



241

G-83

ԵՐԵՎ

# ԽՈՍԿԱՑՈՒԹԻՒՆ

ՓՐԿՈՒԹԵԱՆ ՃԵՄԲՐՈՒՆ ՎՐԵՅՈՒ

ՈՒ

ՔԱՐՈԶԻՉ ՄԸ ԻՐ ՀԱՇՈՎՈՒՄԴԻՆ  
ՄԵԿՈՒՆ ՀԵՏ ԿԸՆԵ

---

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

---

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԵԱ  
Ի ՏՊԱԳՐԵՐԻ Ե. Պ. ԶԵՐԶԵԼԻ

“Ե՞՞նչ կը շահի մարդ մը՝ թէ որ բլոր աշ-  
խարհը վաստըկի , և իր անձը կորսնցունէ . կամ՝  
իր անձին համար ի՞՞նչ աղատչէք պիտի տայ-  
մարդ” : Առաքել . մ.օ. . 26 :

“Եստուծոյ առջեւ մէկ մարմին մը պիտի չար-  
դարանայ օրէնքին գործքերովլ . քանզի օրէնքով  
է մեղքը ճանչնալը : Բայց հիմա առանց օրէնքի-  
Եստուծոյ արդարութիւնը յայտնուած է . օրէն-  
քէն և մարդարէներէն վկայուած ըլլալով : Եյս-  
միքն Եստուծոյ արդարութիւնը որ Յիսուս Քրիս-  
տոսի հաւատքէն է , ամենուն յայտնուած է ու  
ամենուն վրայ կ'ըլլոյ . և խարութիւն չկայ : Ին-  
չու որ ամենքը մեղանչեցին , և Եստուծոյ փառ-  
քէն պակսած են : Եւ անոր շնորհքովլ ձրի կ'ար-  
դարանան Յիսուս Քրիստոսով եղած փրկու-  
թեամբը” : Հառավ . Դ . 20—24 :

“Եկէք ինծի բոլոր յոգնած ու բեռնաւորած-  
ներ , և ես ձեզ պիտի հանդչեցունեմ” : Առաքել .  
մ.օ. . 28 :

“Ես եմ ճամբանու ճշմարտութիւնը ու կեան-  
քը . մէկը Հօրը քովլ չգար , եթէ ոչ ինձմով” =  
Յովել . մ.թ . 6 :

78138-42.



1218-87

## ԵՐԵՎ

## ԽՈՍԿԱՑՈՒԹԻՒՆ



Քարողիլը է ըստ . Տարի լոյս քեզ դրացինս .  
ահա կը տեսնեմ քեզ որ առտուանց կանուխ  
ելեր՝ աշխատանքի սկսեր ես , արջառներդ ու  
ոչխարներդ կերակրեր , և ծառաներդ գործի դրեր  
ես : Կը տեսնեմ որ աշխարհիս մէջ յաջողու-  
թիւն դանելը քեզի շատ ցանկալի բան մըն է :

Դրացին . Այո՛ , տէր իմ , աս ամէնը հարկա-  
ւոր է . կերակուրի և հանդերձի համար պէտք է  
հոգ տանիլ . կալուածքին վարձքը պէտք է տէ-  
րոջը վճարել . և աս ամէն բաներուն համար  
պէտք է ջանալ ու աշխատիլ :

Ք . Ես բնաւ չեմ ուզեր քեզ արդիլել քու-  
աշխատանքէդ . ինչու որ քու պարտքդ է “ջանքի  
մէջ թուլասիրա չըլլալ” . բայց գուն զիտես որ մէկ  
ուրիշ պարտաւորութիւն մըն ալ ունիս . ատ մար-  
մնաւոր ջանքէդ ’ի զատ քու հոգիդ ալ պէտք է  
կերակրես ու հագուեցունես :

Դ . Անշուշտ ամէն բանէն առաջ հոգիին հա-  
մար պէտք է հոգ տանիլ , վասն զի ան է դլսա-  
ւոր պարտաւորութիւննիս . բայց ես կը յուսամ  
որ անհոգ չեմ իմ հոգիիս ու գալու աշխարհին

վրայ . և պիտի տրտմիմ , թէ որ դունիս ասանկ գէշ մարդ մը սեպես , կարծեմ պատճառ չունիս իս անանկ անհոդ մարդ մը սեպելու :

Ք . Ասսաւոր պատճառ մը չունիմ քեզմէ կասկածելու ուրիշներէն աւելի . բայց երբոր չորս կողմն կը նայիմ ամենուն վրայ , և կը դիտեմ ընդհանրապէս մարդոց անհոգութիւնը իրենց փրկութեանը վրայով , շատ կը ցաւիմ անոնց վրայ . և յատկապէս քեզի նայելով՝ որ աս ժողովուրդէն մէկն ես , պարտաւոր կը համարիմ իմ անձս իմացունել քեզի ան քու վրադ դալու դատաստանը , որ առանց մեղաց թողութիւն գըտնալու հիսուս Քրիստոսի հաւատքովը՝ չկորսուիս , այլ մասսակից ըլլաս սուրբերուն վիճակին : Կողւ Ե . 12 :

Դ . Տէ՛ր իմ , ինչո՞ւ անանկ բաներ կը մտածես մեր վրայ , որ բոլորովին հակառակ են մարդասիրութեան :

Ք . Օռուռ մոքով մի՛ առներ ատ Առարդասիւրութեան բառը . վասն զի ան նոյն նշանակութիւնը ունի , ինչպէս որ Աէր բառը : Աէրը չպահանջեր որ ամէն մարդիկ բարի սեպենք առանց ընտրութեան : Հապա որ ամենուն համար բարի ուզենք , և ամենուն հետ բարի մոքով վարուինք : Աւրեմն թէ որ ես քու վրադ անհոդ ըլլամ , այսինքն՝ թէ որ բոլորովին զուրկ ըլլամ մարդասիրութիւն ընելէն , ան ատենը իս մարդասէր մարդ մը ըլլալ կը սեպե՞ն :

Դ . Բայց ես կը յուսամ որ դուն մեզ ամէնս-  
չես դատապարտեր . իրա՛ւ որ մեզմէ մէկ քանինե-  
րը ամբարիշտ՝ հայհոյիչ և արբեցող մարդիկ են ,  
սակայն չէ՛ թէ մենք ամէնքս այնպէս ենք : Դուն  
քեզմէ գիտես որ ես միշտ եկեղեցի կ'երթամ ,  
և տարին քանի մը անգամ հաղորդութիւն կ'առ-  
նեմ : Աս բնաւ մէկու մը վնաս տուած չեմ ու  
ամէն մարդու կը հատուցանեմ ինչ որ պարտիմ :

Ք . Ուրեմն քու յոյսերդ ասոնց վրա՞յ կը հաս-  
տատես երկնից արքայութիւնը ստանալու համար :  
Թէ որ աս է քու հաստատութեանդ հիմը , պար-  
տիմ յայտնապէս ըսել քեզի , որ ատ կարծիքդ  
քեզ անյօյս պիտի թողու դատաստանին օրը :  
Վննենք անգամ մը անիկայ Աստուծոյ խօսքով .  
“Աս բնաւ մէկու մը վնաս տուած չեմ” ըսելով՝  
իրը թէ ցուցընել կ'ուզես թէ բնաւ մէկը չես  
յափշտակեր կամ սպաններ , ես ալ չեմ կարծեր  
որ ըրիր , բայց տակաւին դուն շատ մեղք գոր-  
ծած ես և շատ վնասներ տուած ես ո՛չ միայն ու-  
րիշներուն , հապա մասնաւորապէս բուն քու  
անձիդ ալ՝ Աստուծոյ սուրբ օրէնքին դէմ մեծ ու  
անթիւ յանցանքներ գործելով : Այո՛ , ստոյդ  
կ'ըսեմ որ դուն Աստուծոյ պատուիրանքներուն  
ամէն մէկը կոտրած ես :

Դ . Ո՞վ ըսաւ քեզի աս բաննը իմ վրայովս :

Ք . Աստուած ինքը իր խօսքով . վասն զի  
ինքը կ'ըսէ թէ դուն և ամէնքը մեղք գործեցին ,  
ու Աստուծոյ փառքէն պակսած են . (Հայով . Դ .

25.) և յայտնի է որ դուն ալ իր ամեն պատուիրանքները կոտրած ես :

Դ . Ես բնաւ կռապաշտութիւն , կամ սպանութիւն , և կամ շնութիւն չեմ ըրեր :

Վ . Այս , ատոնց ամենն ալ ըրեր ես . մի թէ բնաւ երկրաւոր բան մը սիրած չե՞ս Աստուծմէ ու անոր շնորհքէն աւելի . բնաւ ուրիշ բանէ մը չվախցա՞ր Աստուած բարկացունելէն աւելի , անանկ որ լաւ համարեցար գիտցուած պարտաւորութիւն մը թողուլ . քան թէ քիչ մը ժամանակաւոր չարիք քու վրադ բերել . ահա ասով առաջին պատուիրանքը կոտրած ես : Եւ երկրորդ պատուիրանքը կը ցուցընէ Աստուծոյ պաշտօնը սրտի ջերմեռանդութեամբն ու սրբութեամբը ընել . և վասն այնուրիկ ամեն ինչ որ անվայելուչ էր քու աղօթքիդմէջը , աս պատուիրանքին դէմ էր , ինչպէս ալօթքի մէջ և նորհուրդներդ աս դին ան դին ընելը , անհոգութիւնն ու թեթեռութիւնը , որոնք կուռք պաշտելու պէս կը կոտրեն աս պատուիրանքը , այսպէս է նաև Աստուծոյ ծառայելը զանց ընելը : Աս մասին կը կարծեմ թէ քու անձդ անմեղ սեպելու պատճառ մը չունիս : Ուրեմն քու եկեղեցի գալդ և հաղորդութիւն առնելը անանկ անհոգութիւնով՝ աւելի արժան էր քու մեղքերուդ հետ դասէիր , քանիթէ անօնցմով քու անձդ Աստուծոյ առջելը արդարացունելու համարձակէիր : Բայց քանի մը բոպէ առաջ ես Տէրոջը անունը ոչինչ տեղը բերան առնելդ և զուր տեղը գործաւ

ծելդ լսեցի , առանց զարհուրելի զգայութիւն  
մը ունենալու անոր մեծ փառաւորութենէն՝ որուն  
վրայ որ խօսեցար : Եւ գուցէ տասը հաղար ան-  
գամ այսպէս ըրիր քու կենացդ մէջը . ահա տ-  
սով երկրորդ պատուիրանքը կոտրած ես : Եւ որ  
ատեն որ առանց մէկ հարկաւոր գործի մը զանց  
ես ըրեր Աստուծոյ պաշտօնին գալու կիրակի օրը,  
և տեղի տուեր ես աշխարհային մտածմւնքներու-  
որ կ'արգիլեն քեզ մտադիւրութեամբ Աստուած  
պաշտելէն , ու աշխարհային գործ մը գործել , և հոգ չես-  
ըրեր որ ան բոլոր օրը Աստուծոյ համար սուրբ պա-  
հես կարգալով՝ լսելով՝ աղօթք ընելով՝ մտածե-  
լով ու օգտակար խօսակցութիւն ընելով , ապա  
յայտնի է որ Տէրոջը սուրբ օրը պղծած ես : Աս  
պատուիրանքներուն միտքը ան է որ քու Տէր  
Աստուածդ քու բոլոր սրտովդ պիտի սիրնս . բայց  
գուն ասկից պակսած գտնուեցար՝ երբոր քու ամեն  
գործդ Աստուծոյ փառքին համար չգործեցիր :  
Ուրեմն հիմա ի՞նչ կը խորհիս քու անմեղութեանդ  
վրայ ան պարտաւորութիւններուն նայելով՝ որ  
տասը պատուիրանքներուն առաջին տախտակին  
մէջ յայտնուած են :

Դ . Ես չեմ կրնար համարձակիլ արգարացու-  
նել իմ անձս դէպ'ի Աստուած եղած պարտա-  
ւորութիւններուն նայելով , բայց հաստատ գի-  
տեմ որ մարդու վնաս տուած չեմ :

Ք . Դուն այսպէս չեիր ըսեր՝ թէ որ Աստու-

ծոյ օրէնքին հոգեսոր բնութիւնը և գերազանցութիւնը իմանայիր , ինչպէս որ մեր Տէրը մեկնեց եր քարողութեանը մէջ լեռանը վրայ : Առաջին .  
Զ . Ե , ԳԼ : Հոն կը դտնաս որ դէշ նայուածքը  
աչքով կամ սրտով՝ շնութիւն կը սեպուի Աստու-  
ծոյ առջելը , և զուր տեղը բարկանալը ու խօսքով  
նախատելը տեսակ մը մարդասպանութիւն կը սե-  
պուի . ուրեմն ով կրնայ արդարացունել իր անձը  
ասոնցմէ : Ծաէ որ մէկալ պատուիրանքներն ալ  
պս կերպով իմանալու ըլլաս , ալ յայտնի պի-  
տի ըլլայ որ քու ամէն կենցաղավարութիւնդ՝ որ  
անվայել է քու աստիճանիդ , ամէն անամօթու-  
թիւն՝ մեծերուն երեսին յանդդնութեամբ նա-  
խատինք տալը՝ և քեզմէ վարերուն հետ անո-  
ղորմութեամբ ու անիրաւութեամբ վարվիլը հինգ-  
երորդ պատուիրանքը կը կոտրեն : Եւ ամէն դէշ  
խօսակցութիւն՝ զրպարտութիւն ու սուտումուտ  
խօսքերը՝ որ ուրիշին վնաս կու տան , հակառակ  
են իններորդ պատուիրանքին . և ամէն տրտնջ-  
մունք՝ տժգոհ միտք՝ նախանձ ու ազահութիւն  
մեղք են ու տասներորդ պատուիրանքին դէմ :

Դ . Ուրեմն կ'երևի թէ միայն մէկ պատուի-  
րանք մը կը մնայ , որ անոր դէմ ես չեմ մե-  
զանչեր :

Ք . Ծաէ որ իրաւցունէ քու անձդ ու Աստու-  
ծոյ օրէնքը Ճանչնայիր , ալ քու անձդ անկից ալ  
ազատ ըլլաւ չէիր սեպեր : Ո՞ի բարկանար , ին-  
չու որ քու հոգիիդ փրկութիւնը ուզելուս համար

կը խօսիմ։ Ես չեմ խորհիր թէ դուն գող ես  
կամ յափշտակող, բայց բնաւ չջանացի՞ր քու  
ծախած ապրանքիդ մէկ պակսութիւնը ծածկել  
կամ պահել, երբոր զիտէիր թէ անոր պակ-  
սութիւնը ծածկելդ յատուկ պատճառ եղաւ ծա-  
խու առնողը յօժարեցունելու։ Ո՞անաւանդ՝ շատ  
անգամ չգովիցի՞ր քու ապրանքդ անանկ խօս-  
քերով, որ իրաւունք չէր այնպէս ընել։ Ո՞ի թէ  
ան ապրանքը՝ որն որ ծախողը իր չքաւորութե-  
նէն սովիպուած կը ծախէր, անոր արժողութենէն  
շատ պակաս չառի՞ր։ Ահա ասոնք անշուշտ պիտի  
վկայեն քեզի դէմ։

Դ. Տէր՝ թէ որ ատէկերպով դատելու ըլլաս,  
բոլոր աշխարհը կը դատապարտես։ ինչու որ քու  
խօսքիդ նայելով՝ բարի մարդ մը չկայ երկրի վրայ։

Վ. Աս խօսքը չէ՛ թէ ես ինքիրմէս կը հնա-  
րեմ, այլ յատկապէս Աստուածաշունչը այսպէս  
կ'ըսէ։ թէ՛ “Աղէկութիւն ընող մը չկայ՝ մէկ մըն  
ալ չկայ”։ Հառվէմ։ Դ. 12 :

Դ. Ուրեմն ուրախ եմ որ դուն խիմ ընկեր-  
ներէս աւելի գէշ չես սեպեր։ և կը յուսամ որ  
ինձի նոյնպէս պիտի ըլլայ, ինչպէս որ ուրիշնե-  
րուն։ քանզի ամէնքը մեղաւոր են։

Վ. Եւ ատոր համար կը կարծես որ պէտքը  
չէ հոգ տանիլ թէ դուն ալ մեղաւոր ես։ Հապա  
յոյս ունիս որ դուն ալ բազմութեանը հետ ղանց  
պիտի ըլլուիս։ Չէ՞ որ այսպիսի խորհուրդ քու  
սրտիդ խորութեանը մէջ պահուած է։ Բայց

ըսէ ինծի , բաղմութիւնը ու մինակութիւնը ի՞նչ  
տարբերութիւն ունի Աստուծոյ առջևը , որուն  
ամենատես աչքէն մէկը չկրնար պահութիւն կամ  
անոր ձեռքէն աղատիւ : Եթէ Առդոմի մէջ եղած  
ըլլայիր , աս նոյն խորհուրդը իր քաղցրութեամբը  
քեզ ալ պիտի քնացունէր ան տիրած մեղքերուն  
մէջ , սակայն քեզ ան կրակէն պիտի չաղատէր :

Դ . Այսպէս դատելով՝ բոլոր աշխարհը կը  
դատապարտես :

Ք . Դատապարտել , ի՞նչ է ատ դատապար-  
տել բառը . ատիկայ կը նշանակէ դատել ու վճռել  
յաւիտենական տանջանքին համար , որն որ մի-  
նակ արդար Դատաւորին կը վայել ընել : Ես բո-  
լոր սրտովս կ'ուզեմ որ ամէն մարդիկ աղատին  
ան թշուառութենէն ու կորուստէն՝ որ դալու է .  
և ատօր համար հիմա քեզի հետ կը խօսիմ պար-  
զապէս ու ճշմարտապէս , և Աստուծոյ խօսքին  
համեմատ :

Դ . Ուրեմն ո՞վ կրնայ ապրիւլ . և ո՞չ դուն  
ինքդ ալ : Կաղաչեմ տէր , ըսէ ինծի՝ դուն բնաւ  
մեղք չգործեցի՞ր :

Ք . Բարեկամ , ծաղը մի՛ ըներ . վասն զի  
ատ բանը՝ որուն վրայ կը խօսինք , շատ ծանրաւ  
կշխա բան մըն է : Ես ալ քեզի պէս մեղք դոր-  
ծեր եմ , ես մեղաւորներուն դլուխն եմ , ու իմ  
մեղքերս յաւիտենական դատապարտութեան ար-  
ժանի են . Բայց Աստուծած իր անձառ ողորմու-  
թեամբը կամեցաւ զիս արթնցունել որ ապաշխա-

բեմ. և ցուցուց ինձի իմ վտանգս ու կորուստս ,  
և լուսաւորեց իմ խաւարեալ միտքս ու շարժեց  
իմ թմրած հոգիս՝ որ փախչիմ գալու բարկութե-  
նէն : “Եաւ ցուցուց ինձի իր օրհնեալ Աւետարա-  
նին մէջը ան բացուած ճամբան , որ անոր մէջէն  
վաղելով փրկուիմ յաւիտենական մահէն , որ մե-  
ղաց պտուղն է : Հառովն . օ . 23 : Ես յոյս ունիմ  
որ Աւետարանին մէջը յայտնուած փրկութիւնը  
ստացած , և մեղաց թողութիւնը ընդունած եմ  
Յիսուս Քրիստոսի հաւատքովը :

Դ . Կը յուսամ թէ ես ալ կ'ապաշխարեմ ,  
վասն զի ամէն ատեն որ Աստուած կը բարկացու-  
նեմ , յետոյ կը զղջամ ու կը ցաւիմ անոր հա-  
մար : Եւ հաւատքի համար թէ որ կ'ըսես , ինչո՞ւ  
պիտի չհաւատամ , մենք ամենքս ինչպէս որ կը  
յուսամ քրիստոնեայ ենք , միթէ չե՞նք :

Ք . Թէ որ քու զղջալդ սրտանց և ուղիղ ըլ-  
լայ , ու քու հաւատքդ կենդանի և ճշմարիտ ,  
ան ատենը վտանգ մը չկայ քեղի , և երանելի  
է քու կեանիքդ ու վիճակդ : Իսայց շատ մարդիկ  
իրենց անձերը խաբած են մեռած հաւատքով  
թերի ապաշխարութիւնով : Արդ՝ կ'ուղե՞ս որ հի-  
մա քու հաւատքդ ու ապաշխարութիւնդ քննուին :

Դ . Այս , կ'ուղեմ՝ ինչու որ ինձի բնաւ  
վեաս մը չտար քննելը : Թէ որ ես անվախ ու  
անվտանգ եմ , լաւ է քննել . ապա թէ չէ՝ .  
յոյս ունիմ որ հիմա ալ շատ ուշ չէ ապաշխարել  
ու իմ ապաշխարռւթիւնս կատարել : ”

Վ. Հատ աղէկ կ'ըսես . ուրեմն առաջ քու ապաշխարութիւնդ քննենք : Ճշմարիտ ապաշխարութիւնը ան է որ մեղքը ու անոր գարշելի և պիղծ ըլլալը սրտովդ իմանաս , և միշտ միտքիդ մէջը ունենալով ան՝ ատես : Յետոյ քու անձդ մեղքով ապականած տեսնելով՝ քեզմէ զզուիս ու միշտ ջանք ընես մեղքէն հեռու կենալու , և սկսես նոր կեանք մը վարել ճշմարտապէս Աստուծոյ գառնալով : Արդ՝ քու ապաշխարութիւնդ այսպէս է թէ չէ :

Դ. Կը յուսամ որ այդպէս է :

Վ. Մեղաց պտուղը մահ է , և յաւիտենական մահ . ուրեմն միտքդ զրի՞ր որ աս մահին արժանի ես :

Դ. Ես այնպէս արժանի եմ , ինչպէս որ ուրիշները . վասն զի ամենն ալ մեղաւոր են . բայց Աստուծած ողորմած է :

Վ. Դուն հիմա ուրիշներուն համար մի՛ խօսիր , քեզի համար ըսէ՝ թէ կը խորհի՞ս որ յաւիտենական մահուան մահուան արժանի ես :

Դ. Թէ որ Աստուծած ինձի հետ խիստ արդար վարուի , այո՞ արժանի եմ յաւիտենական մահուան . բայց ինչպէս որ կը հաւատամ թէ Աստուծած ողորմած է , անանկ ալ կը յուսամ որ պիտի չդատապարտուիմ :

Վ. Կը վախնամ որ ատ քու Աստուծոյ ողորմութեանը վրայ ունեցած կարծիքդ ճշմարիտ ապաշխարութիւնը խափանէ : Կ'երեայ՝ թէ ողոր-

մութեան յոյս ունիս, ու դեռ կատարելապէս չես  
իմացեր՝ թէ որչափ ողորմելի ու բոլորովին աղ-  
քատ ես, և թէ առանց Աստուծոյ ողորմութեա-  
նը պիտի կորսուիս. և թէ վերաւորուելէն առաջ  
յոյս ունիս բժշկութեան դեղ ընդունել : Աս ան  
է որ Ամենակալ Տէրը կ'անուանէ, “Իր ժողո-  
վուրդին վէրքը հարեանցի բժշկել” : Եթէ՞ . օ.  
14. Ը. 11: Հիմա կ'երեայ որ ասով դուն քեզ  
խաբած ես. վասն զի բնաւ չտեսար որ մեղաց ու  
մահուան վիճակին մէջն ես. բնաւ ատելի չերե-  
ցաւ քեզի մեղքը. և բնաւ չվախցար քու անձիդ  
կորուստէն, և կամ չխոստովանեցար թէ ամենեին  
օգնութիւն կամ կարողութիւն չունիս դուն քեզ-  
մէ. և վասն այնորիկ բնաւ չդիմեցիր անոր՝ որ  
դատապարտութենէ ազատող է : Եւ թէ որ  
բնաւ Վրիստոսի դիմած չես՝ անօդնական ու  
ապականեալ մարդու մը պէս, յայտնի է որ  
փրկութեան յոյս մը չունիս անկեց : Տես ի՞նչպէս  
եղաւ ան առաջին հաւատացեալներուն՝ որ առա-  
քեալները կը յիշեն “Եսր կտակարանին մէջ, թէ  
Պետրոսին ականջ դնողները որքան սրտանց զղա-  
ցին ու ըսին. “Արդիկ եղբայրներ՝ ի՞նչ ընենք”:  
Վորժ . Ը. 37 : “Եցնպէս և բանտապետը երբոր  
իր ողորմելի վիճակը ճանչցաւ, դողալով եկաւ  
առաքելոց ոտքը ինկաւ իր մկրտուելէն ու մեղաց  
թողութիւն ընդունելէն առաջ : Վորժ . ձ.օ.  
29: Եւ Պօղոս ալ դետնի վրայ ինկաւ : Վորժ .  
թ. 4 :

Դ. Անոնք ամենքն ալ անհաւատ էին . բայց  
ես իմ մանկութենէս մլրտուեցայ , և բարին ձանչ  
նալու համար կրթուեցայ , ու միշտ կը հաւատայի :

Ք. Աստուած ամենուն հետ մէկ կերպով չվա-  
րուիր . բայց զդուշ կեցիր որ քու յստ դրսի  
բաներուն վրայ չդնես : Ատոյդ է որ քու ման-  
կութենէդ մլրտուեցար , բայց քննէ՛ քու սիրոդ  
ու կեանքդ թէ արդեօք աշխարհիս մէջ Աստուած  
չունեցողի մը պէս չապրեցա՞ր : Մի թէ աշխարհը  
մարմինը և սատանան ուրանալուդ տեղը , աշխար-  
հիս կամքերուն չհետեցա՞ր շատ բաներ մարդոց  
կարծեացը պէս դատելով՝ ու Աստուծոյ խօսքին  
դէմ հակառակելով : Մի թէ շատ անգամ աշ-  
խարհի ձայնին աւելի մտիկ չըրի՞՞ քան թէ Աս-  
տուծոյ ձայնին . և աշխարհի սովորութեանը  
պէս չվարուեցա՞ր Աստուծոյ պատուիրանքին դէմ  
երթալով ու դործելով : Մի թէ շատ անգամ  
քու մարմաւոր ցանկութիւններուդ չհետեցա՞ր  
Աստուծոյ սուրբ օրէնքը բանի տեղ չդնելով՝ ու  
աւրելով . և թէպէտ յայտնի յանցանք մը չփոր-  
ծեցիր ալ , բայց չար խորհուրդներ քու սրտիդ  
մէջը չպահեցի՞ր . և պղտիկ մեղքերուն համար բնաւ  
անհոգ չեղա՞ր : Եւ չէ՞որ շատ ատեն յատկապէս  
սատանան իշխան եղաւ քու վրադ , ու կը դրդէր  
քեզոր Աստուած բարկացունես ու անոր սուրբ ա-  
նունը և սուրբ օրը պղծես . և ան ալ այնպիսի փուձ  
հեշտութեանց համար՝ որ յայտնի կը ցուցունեն  
թէ սատանան տիրապետած է քու վրադ ու կ'իշխէ :

Աւ չէ՞որ դեռ ատ մեղքերուդ մէջը մնացած ես քիչ  
հոգ տանելով, կամ իսպառ հոգ չընելով քու հո-  
գիիդ փրկութեանը համար, ու յոյս ունիս որ պի-  
տի փրկուիս : Աւ հիմա ալ քու կենցաղավարու-  
թիւնդ նոյնպէս չէ՞ ահա կը տեսնեմ որ գուն ճանչ-  
նալով կը խոստովանիս թէ այնպէս է : Ուրեմն  
հիմա յայտնի չէ՞ որ այսպէս քու միրտութիւնդ  
օդուտ մը չունի քեզի . և որ շատ հարկաւոր է  
քեզի որ Աստուծոյ դառնաս ու ամէն բան նոր ՚ի  
նորոյ սկսիս :

Դ . Ի՞նչպէս պարտիմ նորէն սկսիլ :

Ք . Ճանչնալով ու խոստովանելով, թէ Աս-  
տուծմէ հեռանալովդ գուն քեզ մեղաց ու թշուա-  
ռութեան մէջ ձգեցիր . քանզի Աստուծմէ հեռա-  
ցար ու դէպ ՚ի չարը հակամիտեցար, և անոր  
համար սրտով թշնամի ալ եղար Աստուծոյ . և  
թէ իսպառ թաղուած ես մեղաց մէջ ու արժանի  
ես բարկութեան, և կործանման ծայրը կայնած  
ես քու յանցանքներովդ ծածկուած :

Դ . Շատ կ'ուզեմ որ բոլորովին թողում  
մեղքը, դառնամ առ Աստուծած, և ունենամ  
բարի կեանք մը :

Ք . Անոնք բարի խորհուրդներ են, բայց  
կ'երևայ թէ ուզիդ սկզբունքներէ չեն բղխիր .  
վասն զի կը տեսնեմ որ կ'ուզես մեղքդ թողուլ  
և արդարութիւն գործել . սակայն ծածուկ կեր-  
պով մը քու անձիդ ուղղութեանը ու բարի գործ-  
քերու վրայ կը դնես քու յոյսդ, իբր թէ ա-

Նոնք կրնան ընդունելի , ու ՚Քրիստոսի հետ մաս-  
նակից ընել քեզ : Այս սովոր ութիւնը անոնցն է  
որ Ճշմարտութենէն հեռացած են ու մտքով խա-  
ւարած , և անոր համար իրենց կարողութեանը  
վստահելով՝ կ'ուզեն իրենց արդարութիւնը հաս-  
տատել , ( Հայութ . մ . 3 . ) և չէ՛ թէ ՚Քրիս-  
տոսինը : Իայց երբոր խոստովանիս թէ մեղքով  
լեցուն՝ գարշելի ու անպիտան ես , և Յօրին նման  
քու անձեղ զգուած՝ երբոր ճանչնաս ու խոստո-  
վանիս թէ բնաւ ողորմութիւն գտնալու ալ ար-  
ժանի չես , ոչ ալ կարող դուն քեզմէ բարի բան  
մը ընել . երբոր ոչինչ սեպես քու խիստ շատ  
բարի գործքերդ ալ , որ մեղքով ապականած  
են , և քու անձեղ Աստուծոյ առջին խոնարհե-  
ցունես մէկ կորսուած ու անօդնական մեղաւորի  
մը պէս , որ բնաւ յոյս չունի իր անձին վրայ ,  
հապա միայն Յիսուս ՚Քրիստոսի ձեռքովը կատար-  
ուած փրկութեան աւետիսովը իր սիրտը կը մինակ  
քու լեզուիդ դաւանութիւնն ըլլան , այլ Ճշմարտու-  
թիւնով քու պրտիդ խորութեանը մէջ տպուած  
ու հաստատուած . և երբոր աս ամէնը տես-  
նեմ՝ ան ատենը կը հաւատամ որ յատուկ  
շնորհաց գործ մը սկսեր է քու հոգիիդ մէջը :

՚Ե . Այս ի՞նչ է , քու խրատդ իս յուսահա-  
տութեան կը տանի :

՚Ք . Այս , կ'ուզեմ որ յուսահատիս քեզմէ ե-  
ղած ամէն օգնականութենէն ու ամէն գործքերէն ,

որոնց վրայ քու յոյսդ դրած ես . վասն զի մինչեւ  
որ անանկ չընես , այնչափ աղէկ չես կրնար պա-  
տուել՝ թրիստոսը՝ ինչպէս որ արժան է . և չես եր-  
թար անոր քովը իրու մի միայն քու ֆրկիչդ . որ  
եկաւ գերիներուն թողութիւն քարողել . ու սրտով  
խոցուածները բժշկել : Պ ուկ . Դ . 19 :

Դ . Կարծեմ աս ամէնը մէկ խիստ շատ չարա-  
գործ մեղաւորի կամ կռապաշտի մը հարկաւոր են .  
Բայց ես միշտ քիչ թէ շատ Աստուծոյ վախովը  
կը վարեմ իմ կեանքս , միշտ եկեղեցի կ'երթամ  
և միշտ կը հաւատամ :

Ք . Ե իտակը ըսելով քեզի՝ կը վախնամ որ  
դուն բնաւ չհաւատացիր ինչպէս որ արժան էր .  
և ասոր համար շատ բան ունիմ քեզի խօսելու  
ուրիշ անդամ : Հիմա յայտնի է որ քու ապաշ-  
խարութիւնդ ճշմարիտ չէ . վասն զի դուն բնաւ  
չտեսար ու չիմացար քու անձիդ կորուստը , և վասն  
այնորիկ չկրցար . քու բոլոր սրտովդ փափաքիլ  
որ ազատիս անկից ինչպէս որ պէտք է : Եւ աս  
պատճառաւ միշտ քու անձդ խաբեցիր՝ յուսալով  
թէ քու վիճակդ բարի է , կամ թէ բարի պիտի  
ըլլար , թէ որ միայն քիչ մըն ալ աղէկ կեն-  
ցաղավարութիւն ունենայիր : Ահա աս քու յոյսդ  
քու անձիդ վրայ՝ ճշմարտապէս մեղք է . բայց  
ապաշխարութեան ուրիշ նշաններուն նայելով ,  
ինչպէս՝ մելքէն հեռանալուն , դուն լաւ դիտես որ  
առանց հոգ տանելու քանի մը սովորական մեղ-  
քերու մէջ ապրեցար . և Աստուծոյ դառ-

Նալու կողմանէ ալ յայտնի է որ չդարձար Աստուծոյ . ինչու որ բնաւ չգիտցար ու չիմացար՝ թէ քու ցանկութիւններուդ հետևելով հեռացած ես իրմէն :

Երաւ որ (թէպէտ կ'երեայ թէ դուն չես գիտեր ան , ) ան խանգարեալ բնութիւնը՝ որ դուն ու ամէն մարդիկ ունին , անանկ բնութիւն մընէ , որ անկից մեղք ու ապականութիւն դուրս կու գայ : Դուն Աստուծոյ կամքը ընելուդ տեղը , քու կամքդ կատարել ուզեցիր , որ քու ապականեալ բնութիւնդ մարմնաւոր ուրախութիւնով ու հարստութիւնով , աշխարհային պատւով ու հանգստութիւնով և ասոր նման ուրիշ բաներով ուրախացունես . ահա աս էր քու բոլոր կենցաղավարութեանդ յատուկ դիտաւորութիւնը , որ հակառակ էր ան պատուիրանքին ըսածին՝ թէ “Ամէն բան Աստուծոյ փառքին համար ըրէք” : Ե Կորնիլ . մ . ՅԱ : Վանաւանդ թէ քու անձդ աղէկ քննելու ըլլաս , քու սրտիդ մէջը յատուկ թշնամութիւն կը գտնաս դէպ’ի Աստուած . և առաքեալն ալ կ’ըսէ , թէ՝ “Վարմնաւոր խորհուրդը թշնամութիւն է առ Աստուած” : Հառով , մ . 7 : Եւ աս թշնամութիւնը յայտնի կը ցուցընէ իր Աստուծոյ կամքին դէմկենալը , ան բանը ընել տալով՝ որն որ անիկայ արգիլեց , և ան բանը ընել չտալով՝ որն որ անիկայ ընել պատուիրեց . նաև փախչելով Աստուծմէ իրու մեր թշնամիէն , և ջանալով՝ որ քու անձդ պահես իրմէն , ինչպէս որ Աս

դամ ըրաւ : Արդեօք բնաւ օրեր կամ շաբաթներ  
 չանցուցի՞ր առանց մտածելու Աստուծոյ վրայ սրտի  
 ջերմեռանդութեամբ , թէ և միշտ և անխափան  
 անոր ձեռքէն ողորմութեան շնորհք ընդունեցիր :  
 Աիթէ այսպիսի խորհուրդները մեկ դի չձգեցի՞ր ու  
 չատեցի՞ր , երբոր քու միտքդ կու գային . արդեօք  
 Աստուծոյ և յաւիտենական կենաց կամ պատժոյ  
 համար խորհելէն՝ քու խաղաղութիւնդ չուզող  
 թշնամիներէն փախչելու պէս բնաւ չփախա՞ր , ու  
 չխղդեցի՞ր անոնք աշխարհային հոգերով՝ դատարկ  
 խօսակցութիւնով՝ ունայն խաղերով և ուրախու-  
 թիւնով : Արդեօք աս կերպովս բնաւ Աստուծմէ  
 չփախա՞ր , այո , դուն աղէկ գիտես որ ճշմարիտը  
 կ'ըսեմքեզի : Ուրեմն թողութիւն շնորհէ ինծի որ  
 համարձակ խօսիմքեզի հետ . ինչու որ մինչեւ  
 հիմա մոլորած պտըտեցար ու քու անձիդ կորուս-  
 տը չճանչցար . քու անձդ խարեցիր , և քու հո-  
 գւոյդ հետ խաղաղութիւն կը խօսէիր՝ քանի որ  
 խաղաղութիւն չկար : Արդեկուր հիմա ու մտածէ  
 ան ամէնը որ ինծմէ լսեցիր , կարդա Աստուծա-  
 շունչ Առւրբ Գիրքը , և աղաչէ՛ Աստուծոյ որ  
 շնորհք տայ քեզի՞ որ քու խկական վիճակդ ճանչ-  
 նաս ու ամէն կերպով ուղիղ դատաստան և  
 քննութիւն ընես :

---

# ԵՐԿՐՈՐԴ

## ԽԾԱԾԿՅՑՈՒԹԻՒՆ

Ք. · Ծարեկամ , ես յոյս ունեի քեզ ասկից  
առաջ տեսնել , որ մէկ մըն ալ խօսինք ան շատ  
հարկաւոր բաներուն վրայ :

Դ. · Արդարեւ տէր , թէ որ համարձակիմ ճշմա-  
րիտը խօստովանիլ , պէտք է ըսեմ որ ան քու ըսած  
խօսքերդ այնքան չհաւնեցայ որ ցանկայի անդամ  
մըն ալ լսել անոնք : Եւ հիմա ալ քու քովդ չէի  
գար , բայց միայն ան բանին համար որն որ մէ-  
կալն օր քու քարոզութեանդ մէջը լսեցի :

Ք. · Խիստ շատ կը հաւնիմ ատ քու անկեղծ հա-  
մարձակութիւնդ՝ սիրելիս . բայց ի՞նչ էր ան՝ ո-  
րով ես քեզ տրտմեցուցի :

Դ. · Ես կարծեցի որ դուն խիստ սաստիկ յար-  
ձակեցար իմ վրաս . և շատ վախցայ որ չըլայ  
թէ իմ բոլոր սիրտս տրտմութիւնով լեցունես :

Ք. · Չե՞ս կարծեր որ ամէն ինչ որ քեզի հետ  
խօսեցայ , քու հոգիիդ փրկութիւնը ուղելէս  
շարժուած խօսեցայ :

Դ. · Այս , կը հաւատամ որ ճշմարտապէս  
սիրով շարժուած խօսեցար :

Ք. · Կը կարծե՞ս որ խօսածներուս մէջը սուտ  
բան մը կար :

Դ. · Այս , ան ատենը անանկ կը սեպէի , ինչու  
որ կ'երևար ինծի թէ շատ խստութիւնով դատե-

ցիրիս , և ամէն գէշ մարդոց հետ հաւասար սեպեցիր իս . բայց հիմա յայտնի իմանալով կը խոստովանիմ՝ թէ ինչ որ ըսիր , ամէնն ալ ճշմարիտ էր :

Վ . Ուրեմն ի՞նչ բան խորհուրդներդ այսպէս փոխեց :

Դ . Աւկալ օրուան քու տուած քարոզդ . որ ան ահաւոր դատաստանին օրուանը վրայ ըլլալով շատ խռովեցայ երբոր լսեցի . վասն զի շատ կը վախնամոր եթէ դատաստանին օրը հիմա հասնի՝ իս անպատրաստ պիտի գտնէ : Եւ ան ատենը ինչ պիտի ընեմ . միայն աս կրնամ ընել այսինքն աղաչել , թէ՝ Տէ՛ր , ողորմէ իմ խղճալի հոգիս :

Վ . Են ատենը շատ ուշ պիտի ըլլայ որ աղաչես ու ողորմութիւն գտնել յուսաս . բայց մասնաւորապէս ինչ էր ան որ շարժեց քեզ ատ կերպով դատել քու անձդ :

Դ . Են խօսքը՝ որն որ դուն ցուցուցիր . Ապաֆն . Իւ . գլխէն , թէ դատաստանին օրը արդարները մեղաւորներէն պիտի զատուին , և թէ ասզատուիլը առաջ կու գայ ան բաժանումէն որ աս աշխարհիս մէջը կ'ըլլայ՝ երբոր արդարները մեղաւորներուն գործքերը ու ընկերութիւնը կը ձգեն : Բայց ես իմ մէջս ասանկ բաժանումմը չեմ գըտներ . և վասն այնորիկ շատ կը վախնամ որ չըլլայ թէ գեռ ան մեղսալից վիճակին մէջը եղած ըլլամ՝ որուն մէջ ամէն մարդիկ բնականաբար կը մնան , ինչպէս որ դուն ըսիր :

Ք . Հատ պատճառ ունիս վախնալու . ձեզի  
ըսիր (ա) թէ Ան օրը միայն անոնք արդար կը  
սեպուին , որ արդարութեան ցանկալով Յիսուս  
Քրիստոսի դիմեցին , որ անով արդարանան ու  
փրկուին . որ Աստուծոյ Նոգիովը սրբուեցան .  
որ սիրտերնին նորոգուեցաւ . և որ սուրբ կենցա  
ղավարութիւնով յայտնի ցուցուցին աս մեծ փո-  
փոխմունքը իրենց մնացած կենացը մէջ՝ թէ և ի-  
րենց մեղքերը շատ ու մեծ էին : Եւ թէ (բ) Ան  
օրը մեղաւոր անոնք կը սեպուին , որ ապրեցան ու  
մեռան առանց Քրիստոսի վրայ կենդանի հաւատ-  
քին . և որ Աստուծոյ Նոգին չընդունեցին իրենց  
սրտերուն մէջ , թէ և իրենց կենցաղավարութիւնը  
դրսուանց շատ պարկեցտ էր ու բարեգործ :

Դ . Խրաւ՝ ատիկայ էր որ իս վախով լեցուց .  
վասն զի ըսիր , թէ Արդ մը որչափ բարեգործ  
ըլլայ՝ տակաւին անիկայ ալ մեղաւոր է և ար-  
ժանի դատապարտութեան , թէ որ առանց բաժին  
ունենալու Քրիստոսի մէջ՝ և առանց Աստուծոյ  
առջելը Քրիստոսով արդարացած ընդունելի ըլլա-  
լու մեռնելու ըլլայ : Եւ թէ աս ողորմութիւնը ու  
աս ընդունելի ըլլալը Յիսուս Քրիստոսի ձեռքով  
թէ որ մէկը իր մեռնելին առաջ ստանալու ըլլայ ,  
ալ անոր մեղքերը զինքը դատապարտելու համար  
չեն յիշուիր ան մեծ օրը : Եւ աս բանը հաստա-  
տելու համար դուն մեղի ցուցուցիր՝ թէ վերջին  
օրը , Աստմէոս Աւետարանիչին պատմութեանը  
նայելով , արդար Դատաւորին առջելը բնաւ մար-

դոց մէկ մեղքը չյիշուիր , ոչ ալ ամբարիշտ մարդոց մէկ բարի գործը :

«Բ . Ան ամբարիշտները որ կ'ապրին ու կը մեռնին , առանց ճանչնալու խոնարհութեամբ իրենց բնական ապականութիւնը ու գործած մեղքերնին՝ անանկ որ բնաւ հաւատքով չգիմեցին Աստուծոյ ողորմութեանը՝ որ Քրիստոսով պատրաստուած է , իրաւ կ'ըսեմ որ այնպիսի ամբարիշտները բնաւ յիշուելու արժանաւոր բարի գործ մը չունին , վասն զի ինչ որ անոնք կ'ընեն՝ ծուռդիտաւորութիւններէ առաջ կու գայ . ինչու որ կամ անձնասիրութեան և աշխարհական ցանկութեանց համար կ'ընեն , և կամ իրենց գործքերովը Քրիստոսի մէջ բաժին մը ունենալու , ու իրենց մեղքերուն Աստուծոյ առջևը թողութիւն ստանալու համար . որ յայտնի կը ցուցունեն՝ թէ փրկութիւնը օրէնքին գործքերէն կ'ուղեն ստանալ : Եւ անոր համար իրենց գործքերը ոչինչ կը սեպուին . ինչու որ հաւատքով չգործուեցան , ու սիրոյ աղբիւրէն չըղխեցան , և մէկը կարող չէ Աստուծոյ ընդունելի բարի գործ մը գործել , թէ որ Քրիստոսի հետ միաւորուած չըլլայ , որ անիւկայ է միայն Ճշմարիտ որթը , ու հաւատացեալները ճիւղ են , որ անկից կեանքը կ'ընդունին , ու պտուղ կուտան : Յովհ . Աւ : Ի՞այց մէկալ կողմանէ արդարները՝ որ ընդունելի եղան Քրիստոսով , անոր համար իրենց մեղքերը ալ չեն յիշուիր . վասն զի շատ ժամանակ առաջ թու-

զուեցան ու ջնջուեցան և իրենց կիսկատար ծառայութիւնները ընդունելի կ'ըլլան իրենց Քահանայապետին՝ Հիսուսի ձեռքովը, որ անոնց անօրէնութիւնները իր վրայ առաւ, և ձրի շնորհօք կ'արդարանան առատապարգև Դատաւորին առջեր: Ուրեմն աս կերպով կը զատուին արդարները մեղաւորներէն: մէկը մեղաց թողութիւն կը գըտնայ և ընդունելի կ'ըլլայ Քրիստոսով արդարի պէս, ու մէկալը բնաւչճանչնալով կատարելապէս իր մեղանչական ու կորստական վիճակը, և ամբարտաւանութեամբ չխոստովանելով իր ոչինչ ու մեղաւոր ըլլալը, դուրս կը ձգուի: Ան որ Աւետարանին մէջ յայտնուած ողորմութիւնը ու փրոկութիւնը խնդրելու չհետեւիր, և օրէնքին գործքերովը արդարանալ կ'ուղէ, անշուշտ դատաստանին օրը պիտի դատուի օրէնքին պայմանովը, որ կատարեալ հնազանդութիւն կը պահանջէ, և կը դատապարտէ ամենքը որ առ կատարեալ հնազանդութիւնը չունին: Ա ասն որոյ անիկայ առանց միջնորդի մնալով և մեղաց թողութիւն չգտնալով պիտի դատապարտուի:

Դ. Յաէ որ այդպէս է, ուրեմն ինչո՞ւ մեր գործքերը կը յիշուին ան օրը:

Ք. Աս բանին համար երկու պատճառ առաջ կը բերեմ քեզի, նախ՝ Յաէ և գործքերը հիմն ու պատճառ չեն՝ որով մարդս փրկուի և ընդունելի ըլլայ, բայց անոնք յատկապէս կը ցուցունեն՝ թէ արդեօք մարդս արդարացած վիճակին մէջն է,

թէ չէ . Ա ասն զի թէ որ մենք՝ Քրիստոսի վրայ  
հաստատուած չըլլանք , մենք մեզմէ ամենեին սրբ-  
լութեան պտուղ չենք կրնար ունենալ . յանօր  
համար պարտինք սրբութեան պտուղ բերել , որ  
Ճշմարտապէս գիտցուի թէ մենք՝ Քրիստոսի մէջ  
հաստատուած ենք , ինչպէս որ մեր Տէրը կ'ըսէ .  
«Պամ մէջս կեցէք՝ ու ես ձեր մէջը : ինտոր որ Ճիւ-  
ղը ինքիրմէն չկրնար պտուղ բերել , թէ որ որ-  
թին վրայ հաստատուած չըլլայ . ասոր պէս դուք  
ալ թէ որ իմ վրաս հաստատուած չըլլաք» :

Յովհ . ԺԵ . 4 : Ուստի անոնք որ իրենց կեանքը  
արդարութեամբ ու սրբութեամբ չեն վարեր , ի-  
րենց անձերը կը խարեն ինքզինքնին արդար սե-  
պելով . քանզի բարի գործքերն են յատուկ նշան  
որ կը դատէ հաւատացեալները անհաւաներէն :  
Երկրորդ՝ բարի ու օգտակար գործքերուն զանա-  
զան աստիճանները արդարներուն մէջն ալ տար-  
բերութիւն կ'ընեն . անամնկ որ Աստուած ալ կը  
բարեհաճի զանազան փառքի աստիճան տալ տ-  
նոնց : Եւ ամէն մէկուն փառքին աստիճանը , իր  
տուած պտուղին ու ջերմեռանդութեամբ Աստու-  
ծոյ այգիին մէջ աշխատելուն նայելով կը չափուի  
ու կը հաստատուի :

Ու . Ես միշտ կը կարծէի՝ թէ մենք քրիստոն-  
եաներս ամենքս ալ Ճշմարիտ հաւատացեալներ  
ենք , և թէ մեր մէջը բնաւ զանազանութիւն չկայ ,  
և թէ դատաստանին օրը անոնք միայն կը սե-  
պուին արդար՝ որ իրենց կեանքը օրինակոր կերպով

սրբութեամբ ու բարեգործութեամբ անցուցին ։  
 Ես ինքը ինքս անոնց մէջն ըլլալ կը կարծէի, և ան  
 ամենուն մէջն ալ՝ որ ինծմէ աւելի աղէկ էին ։  
 և թէ պիտի դատապարտուին միայն ան ամ-  
 բարիշտները ու անհաւատները՝ որ չարախորհուրդ  
 էին : Հիրաւի միշտ քիչ մը վախ ունէի՝ թէ այն-  
 քան բարի չեմ որքան որ պէտք էր ըլլայի, և  
 չէի գիտեր որչափ մարդիկ արդար պիտի սեպուին,  
 բայց կը կարծէի թէ իմ վիճակս շատերուն՝ և  
 գրեթէ իմ ամէն ճանչցածներուս վիճակէն աւելի  
 աղէկ է :

Պ. . Առ քու մտածմունքդ Աստուծմէ սոր-  
 ված չես . և հիմա չե՞ս տեսներ որ անիկայ սր-  
 խալ է :

Պ. . Հիմա կը տեսնեմ թէ քանի որ աս աշ-  
 խարհիս մէջն եմ պարտիմ բոլոր իմ մեղքերուս  
 համար ոզորմութիւն ու թողութիւն գտնելու ջա-  
 նալ, չէ՝ թէ իմ գործքերուս արժանաւորութիւ-  
 նովը՝ որ բան մը չեն արժեր, հապա Յիսուս  
 Քրիստոսի հաւատքովը : Բայց ատ հաւատքը  
 ի՞նչ է չեմ գիտեր . աս գիտեմ որ ես Ճամբէն  
 դուրս ելած էի :

Պ. . Իրաւցունէ ելած էիր, և հիմա հասած է  
 ժամանակը՝ որ արթըննաս, ու զերմեռանդ սըր-  
 տով Տէրը խնդրես, որ չըլլայ թէ քեզ մէջ  
 տեղէդ կտրէ ու քու բաժինդ ան կեղծաւորնե-  
 րուն հետ գնէ, ուր որ լալ ու ակռաներ  
 կճռցունելն կայ :

Դ. Կաղազեմ տէր՝ ըսէ ինծի, ի՞նչ ընեմ որ  
փրկուիմ :

Ք. Ի՞նչ կը խորհիս քու անցուցած կեան-  
քիդ վրայով :

Դ. Կը տեսնեմ որ ամէն օր Աստուած բար-  
կացուցի՝ իր պատուիրանքները կոտրելով, և իմ  
կամքս կատարելով ու չէ՛ թէ իր կամքը, և ար-  
դէն հաղարաւոր մեղաց պատիմի տակն ինկած  
եմ, որ անոնց պինտ պղտիկը բաւական է իս  
դատապարտելու, թէ և ուրիշ մեղք մըն ալ ը-  
րած չըլլայի :

Ք. Ուրեմն ի՞նչ կը խորհիս քու բարի գործ-  
քերուդ վրայ :

Դ. Ի՞նչ կը խորհիմ, մինակ մեղք կը տեսնեմ  
իմ ամէն գործքերուս մէջը . վասն զի ամբարտա-  
ւանութիւնս՝ որով ես իս ուրիշներէն աւելի  
բարեգործ կը սեպէի, իմ աշխարհասիրութիւնս,  
իմ ընդունայն բաներուն ցանկալս, և իմ միտքս  
վրաս չպահելս թէ՛ աղօթքի մէջ և թէ քարոզ  
լսելու ատենս, բաւական են իս դատապարտելու,  
թէ և ուրիշ մեղք մը գործած չըլլամ :

Ք. Ուրեմն ի՞նչ ընելու միտք ունիս :

Դ. Ո՞հտք ունիմ որ աւելի աղէկ կեանք մը  
վարեմ, մեղաց հետ կռուիմ ու աղօթք ընեմ :

Ք. Բայց աս ըսած ամէն բարեգործութիւն-  
ներդ մինչև հիմա մեղաց հետ խառնուեցան, ալ  
ի՞նչպէս կը յուսած որ անոնք ընդունելի ընեն  
քեզ . կամ թէ որ կընայիր շատ աղէկ կատա-

ըել բարի գործքերը , ատ ամէնը քու պարտաւորութիւնդ են . և վասն այնորիկ թէ և կարողանաս բարի գործքեր գործել , անոնք քու անցած մեղքերուդ տեղը չեն կրնար լեցունել . բնաւասոնց մէկին պատճառաւը ամենեին մէկը կարող չէ արդարանալ . քանզի օրէնքին գործքերովը մէկ մարմին մը պիտի չարդարանայ Աստուծոյ առջել : Հառովմ . Դ . 20 :

Դ . Ճշմարիտ է որ իմ առջևս ճամբայ մը չեմ տեսներ . թէ որ երբէք մեղքով կորսուած մարդ մը կայ՝ անիկայ ես եմ . ուրեմն ի՞նչ ընեմ : Ք . “Հաւատա՛ Տէր Յիսուս Քրիստոսին , ու պիտի փրկուիս դուն՝ և քու տունդ” : Գարդ . Ժ. Զ1 : “Ա՛ս է Աստուծոյ գործը , որ անոր խրկածին հաւատաք” : Յով . Օ . 29 : “Ասով՝ ամէն ով հաւատայ , կ'արդարանայ” : Գարդ . Ժ. Գ . 39 : Ուստի այդպէս մերկ՝ աղքատ՝ մեղաւոր և անօդնական եկուր Աստուծոյ քովը , որ Քրիստոսով ողորմութիւն գտնես : “Ա ասն զի բոլորովին կարող ալ է ապրեցընելու անոնք՝ որ իրմավ Աստուծոյ կու գան . որովհետեւ ինքը միշտ կենդանի է անոնց համար բարեխօս ըլլալու” : Եթք . 1 . 25 : Եւ անիկայ կարող է լուանալ քեզ քու ամէն մեղքերուդ պղծութենէն ու դատապարտութենէն , քու մեղքերուդ զօրութիւնը և իշխանութիւնը կործանել քեզմէ . և բոլորովին քեզ սուրբ ընել , ու քու բոլոր հոգիդ ու շունչդ ու մարմինդ անաբառ պահել , ու մաքութ և անարատ կայնեցու-

նելքեղ Հօր Աստուծոյ առջեր : Եփեա . Ե . 27:

Դ . Բնաւ տարակուսանք մը չունիմ Քրիստոսի իս փրկելուն զօրութեանը ու կարողութեանը վրայ . բայց կը վախնամ թէ այնպէս արժանի մարդ մը չեմ որ կարենամ փրկուիլ :

Վ . Աս բանը որոշելու համար նայէ՛ Աստուծաշունչին մէջը . վասն զի հոն գրուած է թէ Քրիստոս Յիսուս աշխարհք եկաւ մեղաւորները փրկելու : Ե Տէմ . Ե . 15 : Հիմա ի՞նչ կ'ըսես , դուն ալ անոնցմէ մէկն ես , որոնք ինքը փրկելու եկաւ , թէ չես :

Դ . Բայց անիկայ պիտի չփրկէ ամէն մեղաւորները , ու ամենքը իրաւցունէ չփրկեր :

Վ . Ատիկայ անոր համար է որ անոնք չեն ուզեր իրեն գալ , որ փրկուին : Աս բանին համար ինքը գանգատ կ'ընէ ըսելով , “Դուք չէք ուզեր ինծի գալ , որ կեանք ունենաք” : Յոհ . Ե . 40 :

Դ . Բայց միթէ գրուած չէ՞ , թէ “Ապաշխարեցէ՛ք ու աւետարանին հաւատացէ՛ք” : և թէ “Ան որ հաւատայ” ու մլրտուի , պիտի փրկուի” : Մարկ . Ե . 15 : Ճ.Օ . 16 : Ակայն ես կը վախնամ որ աս ալ ըրած չեմ :

Վ . Թէ որ մեղաց բեռովը ծանրացած ես , ու կ'ուզես որ ան վրայէդ մէկ դի ձգես , և զերմեռանդ սրտով կը ցանկաս որ փրկուիս անոր պրդ ծութենէն ու գատապարտութենէն , ապա ճշմարիտ ապաշխարութիւնը սկսած է քու ներսդ : Եւ թէ

որ աս դիտաւորութիւնով ու փափաքով Վրիստոսի  
գաս , ինչպէս որ ինքը Աւետարանին մէջ կը ցու-  
ցընէ , ասիկայ ան հաւատքն է որ կը փրկէ : Ու-  
րեմն Վրիստոսի եկուր , որ ընդունես անոր կա-  
տարելութենէն ներքին ու հոգեօր շնորհքը , որով  
մեղքին մեռած ըլլաս , և վերատին ծնած դէպ 'ի  
արդարութեան . ինչու որ անիկայ կարող է առ  
քեզի շնորհել :

Դ . Ասուած է , թէ “Շատ մարդիկ պիտի  
խնդրեն երկնից թագաւորութիւնը մանել , ու  
պիտի չկընան” . (Ղ ս-կ . մ. 24.) և թէ “Ոչ  
թէ ամէն մէկը որ Տէր Տէր կ'ըսէ , պիտի մանէ  
երկնից թագաւորութիւնը” : Ատամ . 1 . 21 :  
Ահա աս է որ իմ սիրտս վախով կը լցունէ , ու  
իս փրկութէնէ շատ հեռու կը թողու :

Ք . Ուրեմն որո՞ւն երթալ կը մտածես :

Դ . Չեմ գիտեր . վասն զի անկէ 'ի զատ ու-  
րիշ անուն մը չկայ երկինքին տակը մարդոց  
մէջ տրուած , որ անով կարող ըլլանք փրկուե-  
լու : Գործ . Դ . 12 :

Դ . Ուրեմն Վրիստոսի մօտեցի՛ր որ աղատիս  
մեղաց վարձքէն՝ օրէնքին անէծքէն և Աստուծոյ  
բարկութենէն . անոր դնա՛ որ իրմէն ընդունիս  
թողութիւն և խաղաղութիւն , շնորհք ու փառք :  
Եւ թէ որ խնդրելը բաւական չըլլայ երկնից արքա-  
յութիւնը մտնելու , ջանա՛ . ու թէ որ շատերը  
Տէր Տէր ըսելով պիտի չփրկուին , թողքու սիրտգ-  
քու բոլոր կենացդ մէջ Տէրը փնտըռէ ու անօր

աղաչէ , որ փրկուիս : Ի՞այց այսու ամենայնիւ չէ թէ քու մէկ ջանքդ կամ կարողութիւնդ քեզ ընդունելի կ'ընէ ու կը փրկէ , այլ եթէ քու հաւատքդ ճշմարիտ՝ կենդանի և փրկարար ըլլայ , ան ատենը բոլոր բարի գործքերը անկից կը բղխին ու առաջ կու գան :

Դ . Ասոր համար կը վախնամ որ չըլլայ թէ իմ հաւատքս սուտ ու մեռած հաւատք մը ըլլայ :

Ե . Ուէ որ քու հաւատքդ ճշմարիտ ըլլայ , ալ քու յոյսդ բնաւ քեզմէ եղած բանի մը վրայ չես դներ , ոչքու գործքերուդ վրայ և ոչ քու կարողութեանդ վրայ , հապա մինակ Աստուծոյ ոլորմութեանը վրայ , որ Վրիստոսով խոստացաւ : “ Ասե ճշմարիտ ու կենդանի հաւատքը քու ջերմեռանդութիւնդ կը հրահրէ ու կը բորբոքէ , քեզ աստուածպաշտութեան նախանձով կը վառէ , և քաջութեամբ մեղաց դէմ կուռելու կը զօրացունէ : Ահա աս է որ քեզ կը փրկէ չէ թէ մինակ յաւիտենական դատապարտութենէն , այլ և մեղաց զօրութենէն ու քու աշխարհային ցանկութիւններուդ իշխողութենէն . և ասիկայ կը շնորհէ քեզի անանկ բարի յոյս մը , որ կարենաս հաստատ հաւատալ Քիսում Վրիստոսի՝ ան մեծ օրը բարկութենէն փրկուած ըլլալուդ համար :

Դ . Չեմ կարծեր որ աս հաւատքը ունիմ ես , և անոր համար չեմ համարձակիր հաւատալու թէ Աստուած պիտի ներէ իմ մեղքերս ու ընդունի իս :

Ք. · Ուրեմն Քրիստոսի գնա՛ , և Քրիստոս  
սով եղած Աստուծոյ խօստմունքները ընդունէ՛ .  
ու անոնց ապաւինէ՛ , որ քու հաւատքդ աճի մեծ-  
նայ ու մինչեւ աս կատարելութեանը հասնի : Ա ասե-  
զի աս հաւատքը Աստուծոյ Սուրբ Հոգիին ներ-  
գործութենէն է , և վասն այնորիկ պէտք է խընդ-  
րել իրմէն Յիսուս Քրիստոսի միջնորդութիւնովը :

Դ. · Ես չեմ կրնար համարձակիլ Աստուծոյ  
խօստմունքները այսպէս բռնել , Քրիստոսի  
երթալ . ու անոր վրայ յոյս գնել . քանզի ես  
պղտիկ ողորմութեան մըն ալ արժանի չեմ :

Ք. · Ուրեմն երբ քու անձդ արժանաւոր պի-  
տի սեպես :

Դ. · Խնա՛ւ ամենեին :

Ք. · Ուրեմն աս վիճակիդ մէջ անոր գնա՛ հի-  
մա , որ անիկայ քեզ արժանաւոր ընէ :

Դ. · Ո՞իթէ կրնա՛մ համարձակիլ Քրիստոսի  
երթալ աս վիճակիս մէջ , ու իրմէն փրկութիւն  
յուսուլ :

Ք. · Ո՞ի՛ հաւատար իմ խօսքիս , բայց ակա՞նջ  
գիր Աստուծոյ խօսքին , որ կը հրաւիրէ քեզ ի-  
րեն երթալու , ըսելով “Ո՞վ բոլը ծարւածներ՝  
ջուրերուն եկէ՛ք” : Եսայ . օԵ . 1 : Խնքը կը հը-  
րաւիրէ քեզ իրեն երթալու , ըսելով “Ասիկայ է  
անոր պատուիրանքը , որ իր Որդւոյն Յիսուս  
Քրիստոսին անուանը հաւատաք” : Ե Յովհ . Գ .  
23 : Խնքը կը խօստանայ ընդունելու անոնք՝ որ  
իրեն կու գան , ըսելով “Ան որ ինծի կու գայ”

ընաւ դուրս պիտի չհանեմ”։ ՅովՀ. օ. , 37։ Եւ ինքը կը սպառնայ՝ թէ որ իրեն չերթառ, լսելով՝ “Ի՞ն որ չհաւասար՝ պիտի դատապարտուի”։ Մարի . ձ.օ. , 16։

Դա . Բայց որո՞ւ ըսուած է աս խօսքերը :

Ք . Վ.եղի՝ ինծի և ամենուն՝ որ առ խօսքերը կը լսեն . ինչու որ գրուած է՝ թէ “Վ.ենտարանը քարոզեցէք բոլոր ստեղծուածներուն”։ Մարի . ձ.օ. ,

18։ Ես մանաւանդ անոնց ըսուած է աս խօսքերը , որ կը տեսնեն իրենց կարօտ ըլլալը փրոկութեան . վասն զի անոնք միայն կ'ընդունին աս խօսքերը : Ա ասն այնորիկ կ'ըսէ Փրկիչը , “Եզէք ինծի բոլոր յոգնած ու բեռնաւորածներ , և ես ձեզ պիտի հանգչեցունեմ”։ Մարի . ձ.օ. , 28։

Դ . Աստուածաշունչին ատ խօսքերը իմ բերանըս կը պապանձեցունեն . բայց տակաւին չեմ կը ընար հաւատալ թէ Վ.րիստոս կ'ընդունի ինծի պէս յետին չար մեղաւոր մը :

Ք . Աս էր որ ես առաջ ըսի , թէ հաւատքը մարդոցմէ չէ , այլ Աստուծոյ պարդեն է , որն որ Սուրբ Առգիոլ Աւետարանը լսողներուն կը տըրուի : Ուրեմն առ եւ ուրիշամէն Աստուծոյ շնորհքները խնդրէ աղօթքով Հիսուսի անունով . և քեզ քաջալերելու համար աս ալ խորհէ՛ որ Աստուած անոր համար տուաւ Վ.րիստոսը՝ որ մեղաւորները փրկէ . ասոր համար անիկայ աշխաթհք եկաւ . ասոր համար անիկայ նեղութիւն կրեց՝ լացաւ՝ ու իր արիւնը թափեց , ասոր համար անիւ

կայ կը թագաւորէ ու բարեխօսութիւն կ'ընէ երակինքին մէջ : Անիկայ այնչափ կ'ուզէ մեղաւորնելը փրկել , որ կը վշտանայ անոնց վրայ որ չեն ուզեր իրեն երթալ ու փրկուիլ : Եւ երբ ինքը երկրիս վրայ էր , ասոր համար լացաւ Արուսաղեմին վրայ :

Դ . Չեմ գիտեր ի՞նչ ըսեմ :

Ք . Ի՞նչ ընել կը խորհիս :

Դ . Շատ կը վախնամ որ պիտի չփրկուիմ , բայց գիտեմ որ ուրիշ ճամբայ մը չկայ , այլ միայն Աստուծոյ ձրի ողորմութիւնը Վրիստոսով : Վասն որոյ կը խնդրեմ ան՝ քանի որ կենդանի եմ , և թէ որ կորսուիմ , թող Վրիստոսի խաչին տակը կորսուիմ ողորմութիւն կանչելով :

Ք . Հաստատ կեցիր ադ մտքիդ վրայ , ու Աւետարանին ամէն պատուական խոստմունքները քուկդ կ'ըլլան : Ո՞ի՛ խնդրեր ուրիշ հանդիսատեղ մը , բայց միայն Վրիստոսի քովը , մի՛ դներ քու յոյսդ ուրիշ բանի մը վրայ , բայց միայն Վրիստոսի վրայ : Արթո՛ւն կեցիր որ չըլլայ թէ աշխարհիս զբաղմունքները ու բերկրութիւնները քու միտքդ ծուեն ու հեռացունեն Աստուածային բաներէն . և չըլլայ թէ մեղքով տրտմեցունեա Առւրբ Հոգին : Ո՞ի՛ աքդ բեր որ գրուած է , “ իձէ որ մէկը ետ քաշուի , իմ հոգիս անոր չհաճիր ” : Աբբ . յ . 38 :

# ԵՐԻԱԾ Դ

## ԽՕՍԿ ԿՑՈՒԹՅՈՒՆ

Դ. Կը յուսամ որ չես վշտանար աս իմ  
քեզի տուած նեղութիւններուս համար , ինչու որ  
շատ կարօտ եմ քու խրատներուդ :

Ե. Մի՛րելիս , պէտք չէ ասանկ բան մը յի-  
շել , վասն զի ես շատ պիտի ուրախանայի՞ թէ  
որ իմ ժողովուրդիս ամէնն ալ ասանկ նեղութիւն  
տային ինձի . ի՞նչ է քու խնդիրդ :

Դ. Քիչ մը ատեն է անանկ եղած եմ որ  
կենացս մէջը բնաւ այնպէս եղած չէի առաջ . քան-  
զի շատ վախցայ որ ես պիտի դատապարտուիմ .  
ահա աս մտածմունքը իս վախով ու տրտմութիւ-  
նով լեցուց գիշեր ցորեկ : Բնաւ հարկ չէր  
որ դուն իս զգուշացունէիր աշխարհային հոգերէն  
ու չեշտութիւններէն . վասն զի ուր տեղ որ էի ,  
կամ ինչ որ ըրի , միշտ և ամէն տեղ իմ աշ-  
քիս առջին ռւեէի իմ մեղքերս ու դժոխքին տան-  
ջանքը :

Ե. Բայց ի՞նչ մտածեցիր քու մեղքերուդ  
վրայ , կամ անոնք ի՞նչպէս երևցան քեզի :

Դ. Եմ քանի մը տարի առաջ գործած մեղքերս  
հիմա իմ դէմս ելեր են ու իս կը դատապարտեն .  
և իմ տղայութեանս մեղքերուն յիշատակը այն-  
քան զօրութիւնով իմ ետևէս եկաւ , որպէս թէ ե-  
րէկ կամ մէկալօր գործեր էի : Եւ քանի մը սար-

սափելի խօսքեր՝ որ Աստուածաշունչին մէջը կարդացի ու լսեցի, կ'երևնային թէ յատուկ իմդատապարտութեանա վճիռներն էին : Այս կարծեմ հարիւր անդամ մտածեր եմ աս խօսքին վրայ, թէ “Անղաց վարձքը մահ է” : Հայով. օ. 23:

Ք. . Քննեցի՞ր քու սիրոդ, և տեսա՞ր ու ողբացի՞ր անոր մէջը եղած ապականութիւնը :

Դ. . Առաջ չիմացայ քու ըսածիգ միտքը՝ թէ Ի՞նչ կ'ուզէիր ըսել աիրու ժննել խօսքով, բայց հիմա կարծեմ թէ գիտեմ: Ա ասն զի իմ ներսի դիս սաստիկ ցանկութիւն մը կըզգամ դէպի շատ մեղքերու, և կը բռնադատուիմ ըսել՝ թէ արժանի եմ Աստուծոյ բարկութեանը՝ առաջուց ան ցանկութեանը ետեւէն երթալուս համար: Արդարեւ հիմա իմ որպիսութիւնս ու լիճակս շատ լաւ է քան թէ առաջ: Խմ սրտիս ամբարշտութիւնը ու չարութիւնը իս ունայն ընկերութիւններով ու սնուտի խաղերով կ'ուրախացունէր առաջ, ու ես ինքիրմէս դասարկ ու ոչինչ խօսքեր կը խօսէի, աշխարհային բաներու կը ցանկայի, և աղօթքը ընելը կ'ատէի, կամ անհոգութեամբ կ'աղօթէի. այսպէս նաև բոլոր պարտաւորութիւններս բանի մը տեղ չէի դներ, կամ թէ մէկ ծանր բեռ մը կը մեռէի: Բայց հիմա շնորհակալ եմ Աստուծմէ, որ առաջուան պէս չեմ, ինչու որ իմ ամէն խորհուրդներս ու մտածմոնիքներս վեր դէպի երկինքը բարձրացած են իմ հոգիիս ու գալու աշխարհին համար հոգ տանելու ու պարապելու :

Փ. Կը վախնամ թէ քու 'սիրտդ դեռ այն-  
չափ աղեկ չես գիտեր, որչափ որ կը կարծես :  
Կ'եթեայ թէ դուն կը կարծես որ արդէն ամէն  
բան փոխուած ու նորոգուած է քու ճերսիդիդ :  
Բայց մի՛ խաբուիր, այդպիսի պիդժ թոշնոց բոյ-  
նը՝ ինչպէս որ մարդուս սիրտն է բնութեամբ,  
շուտով չորրուիր իր կերպ կերպ ցանկութիւննե-  
րէն ու չար փափաքներէն : Անոնց արմատէն հա-  
նուած ու դուրս ձգուած երեալը, միայն քիչ մը  
ատեն քնանալ է, ուստի արթուն կեցիր, անոնք  
օր մը պիտի ելլեն ու քու վրադ յարձակին նորէն :  
Կարելի է որ անոնցմէ միայն մէկ քանիները փո-  
խուած ու տեղը ուրիշներն եկած են, որ անոնց պէս  
էդշ ու վեասակար են, ինչպէս ամբարտաւանու-  
թիւնը՝ հպարտութիւնը և ուրիշ ասոնց նման :

Դ. Ճշմարիտ է Տէր, ես ալ կը վախնամ թէ  
գուցէ այդպէս ըլլայ՝ Օր մը երբոր կը խորհէի թէ  
որքան միզաւոր եմ, և թէ որչափ ողորմելի պիտի  
ըլլամգալու աշխարհին մէջ, սա խօսքը միտքս եկաւ,  
“Անոնց ապստամբութիւնը պիտի բժշկեմ, ու անոնք  
ձրիապէս պիտի սիրեմ” : Ատոյդ գիտեմ որ աս  
խօսքը Աստուածաշունչին մէջն է, բայց չեմ կրնար  
գտնալ ան : Ինչ և իցէ ան շատ միմիթարութիւն  
տուաւ ինծի, և անկից մինչև հրմա շատ հանդար-  
տած եմ : Բարեկամ մը՝ որուն հետ խօսեցայ,  
ըսաւ ինծի թէ “Եղ բանը Աստուծոյ ներգործու-  
թիւնը ըլլալ պէտք է սէպես, և թէ՝ այսուհե-  
տև դուն կրնաս ինքզինքդ Աստուծոյ դարձած

մարդ մը սեպել”։ Բայց կը վախնամոր ամբարտաւանութիւն ըլլայ աս . ուրեմն դուն ի՞նչ կը խորհիս ասոր վրայ :

Ք . Այ ինդիրքդ մեկնելէն առաջ պէտք է որ քիչ մը ատեն քու վարքիդ ու բնութեանդ տեղեկանամ , ան խօսքը որ յիշեցիր , Ովաեայ մարդարէութեան տասնեւչորս գլխոյն մէջն է . և կ'երեայ թէ գերի գացած Նորէաներուն համար խօսուած է , բայց ան խօսքերը իրենց մէջը խոստմունք մը ունին , որ բոլորովին Աւետարանին խոստմունքներուն նման է . և վասն այնորիկ անոնք ձրի են և պատրաստ ամէն խոնարհ անձին՝ որ հաւատքով կ'ընդունի անոնք : Ան գլխոյն 1—3 համարին մէջ մարդարէն կը յորդորէ ժողովուրդը ապաշխարելու ու խոնարհելու իրենց մեզացը համար , ըսելով . “Ո՛Վ Խարայէլ քու Տէր Աստուծոյդ դարձիր քանզի քու անօրէնութեանդ պատճառաւ գլորեցար : Զեր հետը խօսքեր առէք , ու Տէրով դարձէք , ու անոր ըսէք . Ամէն անօրէնութիւնը վերցուր . և մեզ բարեւթեամբ ընդունէ . քանզի որբը քեղմէ ողորմութիւն կը դտնէ”։ Նիմա Աստուծած շնորհեց քեզի զգալ ու ճանչնալ քու մեղսալից և անօգնական վիճակդ , որ փափաքիս իրեն դառնալ , ինչպէս որ մարդարէն ալ կ'իմացունէ՝ թէ Աս է առաջուց պատրաստութիւնը խաղաղութեան պատասխան առնելու . ապա յոյս ունիմ որ հետեալ խոստմունքը քեզի կը վերաբերի . “Անոնց ապստամբութիւնը պիտի բժշկեմ , անոնք ձրիա-

պէս պիտի սիրեմ . քանզի իմ բարկութիւնս աշնոնցմէ դարձաւ” : Առ կը յուսամ ալ որ աս քեզի եղած լուստմունքէն հաւատքով գտած մխիթարութիւնդ Ոուրբ Հոգիէն յառաջ եկած է . ինչպէս որ կը սեպեմ թէ քու մեղաւոր ըլլալու զգալն ալ՝ որ քեզ վախով ու խոնարհութիւնով լեցուց՝ երբոր մտածեցիր քու մեղքերուդ վրայ ու Աստուծոյ դատաստանին մեղաւորներուն դէմ ըրած վճռոյն վրայ, Ոուրբ Հոգիին ներգործող զօրութենէն է : Վասն զի ինքն է որ կը յանդիմանէ աշխարհը մեղքի համար և արդարութեան համար : Յովհ . ձ.օ. . 8—10 : Տայց պէտք է աս ըսեմ քեզի որ աս ամէն զգացողութիւնները ու սրտի շարժմունքները կասկածելու բաներ են, մինչև որ տեսնենք թէ անոնք ինչ պտուղ առաջ կը բերեն սրտին ու կեանքին մէջ : Խռէպէտ և ասոնք երբեմն Աստուծոյ Հոգիէն կը բղխին ու շատ ընդունելի են, երբոր Աստուծոյ խօսքին համեմատ կու գան ինչպէս որ հիմակուան քուկիններդ են, բայց երբեմն ալ մեր հոգեսոր թշնամին աս երեւլի մտածմունքները այնպէս կը ձեւացունէ՝ որ մեզ կը խարէ :

Դ . Վ'աղաչեմ տէր, յայտնի ըսէ ինծի, թէ ինչ կը խորհիս իմ վիճակիս վրայով:

Ք . Աստուծոյ շնորհացը յատուկ երկու նշանները կան, որոնք սատանան կարող չէ ձեւացունել ու քեզ խարել:

Առաջինը՝ սուրբ ու նորոգուած սիրտ մը ունե-

նալն է, որն որ միշտ ու ամեն ատեն մեղքը կ'ատէ :  
Այսկրորդ՝ սուրբ կեանք մը վարելն է, որ Կոտու-  
ծոյ ամեն պատուիրանքները կը պահէ ու կը փա-  
տարէ : Ուրեմն ստացիր ասոնք և քու կեանքովդ  
ու վարքովդ ցուցուր, որ քու սիրտիդ մտածմունք-  
ները ու բերմունքները սուրբ ու մաքուր են : Ե՞ն  
ատենը չեմտարակուսիր քուկին փրկութեան ճամ-  
բուն մեջ հաստատուած ըլլալուդ :

Դ. · Ուշափ որ իմ սիրտս զիտեմ, չեմ ուզեր  
որ իմ յօժար կամքովս Կոտուած բարկացունեմ՝  
թէ և կարելի ըլլար ինծի բոլոր աշխարհը ստա-  
նալ : Աս կը տեսնեմ ու կ'ուրախանամ որ Կո-  
տուած Յիսուս Քրիստոսի ձեռքովը իր արդարու-  
թիւնը կը պահէ ու կ'արդարացունէ անիկայ որ կը  
հաւատայ : Կը սիրեմ անոնք՝ որոնք որ անոր ծա-  
ռաներն են . և պատրաստ եմ որ իմ երեսիս ու  
ծունկերուս վրայ քալեմ անոնց աղէկութիւն ը-  
նելու, կամ ուրիշներն ալ անոնց նման ընելու  
համար : Կը սիրեմ անոր խօսքերը լսել՝ անոր ա-  
ղօթք ընել՝ հոգեսոր և երկնային բաներու վրայ  
խօսիլ . և կարծեմ յօժարութեամբ կը մեռնէի՝  
թէ որ իր կամքը ըլլար :

Ք. · Շատ աղէկ, ատոնք բարի նշաններ են .  
բայց ատիկայ քու սիրոյդ՝ առաջին ջերմեռանդու-  
թիւնն է . Այդպէս էր նաև Խրայէլացիներունը,  
անոնց կարմիր ծովը անցնելէն ետե, և Գաղա-  
տացւոց ու Խփեսացւոց եկեղեցի ներունը . բայց  
ասոնց ամենն ալպաղեցան ետքը, դուն ալ զգոյշ  
կեցիր որ անոնց պէս չընես :

Դ. Տեր իմ, կը հաւատամոր դուն ինծմէ ա-  
ղեկ զիտես իմ վտանգի մէջ ըլլալս, ըսէ ինծի,   
ի՞նչ ընեմ:

Բ. Գանք ըրէ որ քու կոչումդ և ընտրութիւ-  
նըդ հաստատես ույայտնես քեզի ալ՝ ուրիշներուն  
ալ՝ արդարութեան պտուղ բերելով, բարի քա-  
ղաքավարութիւնով:

Իմառաջին խրատս ասէ. Աստուծոյ հետքալէ  
խոնարհութեամբ. յիշէ քու կեանքիդ շատ ծանրա-  
ցուցիչ ընթացքը՝ որ մինչեւ հիմա ունէիր Աս-  
տուծմէ հեռանալովու ապստամբելով: Ծձպէտ և  
քու կենացդ մէջ ամէն ատեն՝ ինքը իր ողորմու-  
թիւնը քու վրադ միշտ և հանապազ ցուցուց, ու  
ան ամէնուն վրայ ալ որ քուկդ են, տալով քե-  
զի կերակուր՝ հանդերձ առողջութիւն ու զօրու-  
թիւն. բայց դուն զինքը միշտ ատեցիր. և մանա-  
ւանդ մոռցար զինքը ան նոյն ատենը, երբոր իր  
յատուկ խնամքը ու ողորմութիւնները վայելեցիր:  
Եւ ինքը քեզ պահպանեց մինչեւ անգամ քու ա-  
մէն մեղքերուդ մէջ, որոնցմով դուն զինքը բար-  
կացուցիր ու վշտացուցիր. և վերջապէս բացաւ քու  
հոգիիդ աչքերը որ տեսնես քու վտանգդ, և արթըն-  
ցուց քեզ դատապարտութեան քունէն՝ որ փախ-  
չիս անկից. և հիմա ալ իր անձառելի շնորհքովը  
քեզ կը քաջալերէ և կը զօրացունէ, և յոյս կու  
տայ որ յաւիտենական կեանքը ստանաս: Ահա  
սկսապէս բաղդատէ Աստուծոյ քեզի ըրած ամէն  
բարերարութիւնները անոնց հետ, որոնց որ դուն

արժանի ես, անատենը պիտի սորվիս՝ թէ ինչպէս  
խոնարհիլպէտք է քեզի : Աւրեմն՝ սորվէ սիրելիս,  
ճշմարիտ խոնարհութիւն . նայէ հոգւոյ աչքովան  
քու ունեցած մեղքերուդ վրայ, որ տակաւին կը  
մնան քու ներսդ. և թող քու մեղանչական փառ  
փաքդ՝ քու ունայն խորհուրդներդ՝ քու ծուլու-  
թիւնդ և ան ամէն պակասութիւնները՝ որ քու  
պարտաւորութիւններդ լեցունելու կողմանէ կ'ե-  
րեին, սորվեցունեն քեզի խոնարհ ու հեղ ըլլալ  
և վախնալ. ու այսպէս դուն քեզմէ վախնալով՝  
մէկ անօգնական տղայի մը պէս վեր նայէ դէպ'ի  
Աստուած, որ միշտ զօրանաս, և Յիսուս Քրիս-  
տոսի ապաւինիս որ իր ձեռքովը նեղութեան ժա-  
մանակին օգնութիւն ընդունիս :

Իմ երկրորդ խրամս ալ աս է . քու խղճմը-  
տանքդ ամէն անիրաւութիւններէն աղատ պահէ .  
թէ որ մէկու մը զբկանք ըրեր ես անիկայ խոստո-  
վանելու մի ամշնար . և քու կարողութեանդ չա-  
փովը վճարէ ան զրկանքը . Արթուն կեցիր, որ  
Աստուծոյ Հոգին չարտմեցունես անմաքուր վար-  
քով, և չըլլայ թէ բարկացունես զինքը՝ որ քեզ  
երեսէ ձգէ ու հեռանայ քեզմէ : Ասոր համար  
արթնութեամբ նայէ քու սրտիդ վրայ անդադար  
հսկելով, և միշտ անոր առջին կտրէ որ դէպի  
մեղքը չհակամիտի, և աչքդ բաց ու դէմ կեցիր  
ամէն փորձութիւններուն՝ որ դրսուանց են, և քու  
աչքդ միշտ ան մեղքերուն վրայ հաստատէ որոնց-  
մէ առաջ յաղթուեցար : Եւ թէ որ անդամ մը

Աղքը քու վրադ զօրանայ , ալ մի՛ թողուր որ քու  
միտքդ մոռնայ ան , և մի՛ պահեր ան քու ծոցին  
մէջ իրբե քու կենդանարար բերկրութիւնդ , հա-  
պա թունաւոր օձէ մը վախնալու պէս ձգէ փա-  
խիր շուտով դէպի Աստուած : Վու բո-  
լոր յոյսերդ Յիսուս Քրիստոսի վրայ դի՞ր . ու  
միայն իրեն նայէ իրբեքեղի բաւական պատարագ  
ու միջնորդ Նօր Աստուծոյ առջեր . և բնաւ մի՛  
դադարիր աղօթքով Աստուծոյ երեսը խնդրելէն՝  
մինչև որ մէջմըն ալ խաղաղութիւն շնորհէ քու  
տրտմած հոգիիդ , ու ալաւելի մեծ վախով լեցու-  
նէ քու սիրտդ՝ որ նորէն չտրտմեցունես զի՞նքը :

Դաւն հիմա ինչպէս որ կը յուսամ , Աստուծոյ  
այգիին մէջ տնկուած ես , և ահա ժամանակ է  
պտուղ տալու , ուրեմն պէտք է որ պտուղ բերես :  
Վու սրտիդ մէջը դի՞ր Աստուծոյ սէրը , որ դէպի  
մեղաւորներուն է Յիսուս Քրիստոսի ձեռքովը .  
մանաւանդ միտքդ բեր թէ Աստուած ո՞րքան ո-  
ղորմութիւն ցուցուց քեզի , որ քեզ խաւարէն դէ-  
պի իր սքանչելի լսուր կանչեց : Յիշէ որ ինչպէս  
մեղաց քունին մէջ թմրած ինկած էիր ու ծուլու-  
թեան մէջ ընկղմած , երբ Դատուած արթնցուց  
քեզ . որ քու կորուստդ տեսնես ու անկից փախ-  
չիս : Անտածէ անդամմը՝ թէ քանի՞ ողորմելի պի-  
տի ըլլար քու վիճակդ յաւիտեան , թէ որ քու  
կամքիդ հետևելու թողէրքեզ : Անտմաս նաև թէ  
քանի՞ քանի՞ մարդիկ դեռ հիմա ալ ան կորըս-  
տեան ձամբայէն կը վազեն , ուրկից որ դուն ալ

Վազեցիր։ Եւ թող արթնցունէ քեզ Աստուծոյ  
 քեզի եղած յատուկ սիրոյն յայտնութիւնը, ո-  
 րով դուն ալ զինքը սիրես։ Աիրէ զինքը քու բո-  
 լոր սրտովդ, ինչու որ առաջ ինքը քեզ սիրեց։  
 Եւ առ երկնաւոր Հայրդ ունեցած սէրդ թողքու  
 խորհուրդներուդ՝ խօսքերուդ ու գործքերուդ մէ-  
 ջը մտնէ ու ներգործէ։ Միշտ և անդադար քաղ-  
 ցրութեամբ Աստուածային բաներու վրայ մտածէ։  
 Եւ քու սիրտդ դէպի անոր բարձրացուր որ քու  
 սիրտդ ու խորհուրդներդ կը քննէ։ Քու երկնա-  
 ւոր Հօրդ հետ մէկ առանձին հաղորդութիւն ու  
 միաւորութիւն մը ունենալ խնդրէ, ու ասոր հա-  
 մար ջանա՞ որ քու խորհուրդներդ աշխարհի բա-  
 ներէն ետ դարձունես. և քու միտքդ դէպի եր-  
 կինքը դարձուր ան բաներուն՝ որ անտեսանելի են,  
 բայց միայն հաւատքով կը տեսնուին։ Ահա այս-  
 պէս քու հաւատքդ՝ յոյսդ՝ ու սէրդ Աստուծոյ ու  
 երկինքին վրայ հաստատելով՝ երկնից բնակիչն մը  
 պէս թէ որ վարես քու կեանքդ աս աշխարհիս  
 մէջ, ան ատենը Աստուծոյ ընդունելի կ'ըլլաս, ու  
 երկինքին երանաւէտ և անվախճան թագաւորու-  
 թիւնը կը ժառանգես Հիսուս Քրիստոսով։

Այսուհետեւ քու ոչինչ խօսակցութեանդ տե-  
 ղը թող քու լեզուդ Աստուծոյ փառքին համար  
 խօսի իրանունը փառաւորելով, իրմէն՝ քու մար-  
 դասէր բարերարէդ շնորհակալ ըլլալով, իր քու  
 հոգիիդ համար բոլոր ըրածները ամենուն պատ-  
 մելով, մշղաւորներուն՝ իրենց կորուստը ցուցունե-

լով, և անոնց սիրտ տալով՝ որ Աստուծմէ վախ-  
նան, և որ ժիր ու կտրիճ ըլլան անոր ծառայու-  
թեանը մէջ :

Եւ քու կենցաղավարութիւնդ թող անանկ ըլլայ,  
ինչպէս որ Աւետարանին կը վայլէ : Դուն կանչուե-  
ցար որ հաւատքին բարի պատերազմը պատերազ-  
միս . նայէ որ չմուլնաս կամ չճանձրանաս բարիք  
գործելէն : Եւ ջանա քիչմը բան ընել Անոր հա-  
մար՝ որ այդքան բան ըրաւ քեզի համար : Արէ ամէն  
մարդիկ, ինչու որ Աստուծոյ ձեռացը ստեղծուած-  
ներն են . բարի ըրէ ամենուն քու կարողութեանդ  
չափովը . քանզի ժամանակը ու կարողութիւնը և  
ուրիշ շնորհըները անոր համար տրուած են քեզի՝  
որ շատցունես զանոնք ու լաւ շահիս : Դործածէ  
զանոնք սիրոյ ու գմութեան գործքերուլ . բաց  
քու սիրտդ ամէն մարդոյ համար, և քու թշնա-  
միներուդ համար ալ . որ անոնց համար աղօթք ը-  
նես ու անոնց թողութիւն տաս . և միշտ պատ-  
րաստ կեցիր որ բարիով յաղթես չարին :

Ամանապէս արթուն կեցիր որ աստուածպաշ-  
տութեան զօրութիւնը քու սրտիդ ջերմեռանդու-  
թիւնովը ցոյց տաս ան պարտաւորութիւնները  
կատարելով՝ որն որ պարտական ես քու ընտա-  
նեացդ : Քաղցրաբարոյ և բարեսիրտ եղիր ան ա-  
մենուն որ քու բոլորտիքդ են : Քու անձդ խո-  
նարհութեան՝ սիրոյ ու համբերութեան օրինակ  
ըրէ քու ընտանեացդ : Հուցուր քու ունեցած խը-  
նամքդ անոնց հողիներուն ու մարմիններուն վը-

բայ, միշտ տան մէջ ջերմեռանդութեամբ աղօթք  
ընելով. և Աստուծոյ խօսքը անոնց հետ կարդա-  
լով: Երօք ցուցուր քու ընտանեացդ ու բարե-  
կամներուդքու նոր սիրտ ունենալդ ու նոր կեանք  
վարելդ. և ջանք ըրէ որ բոլորովին Աստուծոյ կամ-  
քին ու խօսքին միաբանիս: Քու ամէն առետու-  
րոդ խղճմտանքով ըրէ. ամենուն քու պարտքդ  
վճարէ. որին որ հարկ կը պարտիս, հարկը. որին  
որ մաքս, մաքսը, և այսպէս ևս քու ամէն օրինա-  
ւոր պարտքդ. և բնաւ մէկը մի զրկեր, ո՛չ թա-  
գաւորը և ո՛չ քու հարկատու ընկերդ. և անոնց  
որ զրկանք կ'ընեն, բնաւ մի յօժարիր սիրտ տալ,  
ու գրգռել անոնք որ զրկանք ընեն:

Կյաեւ մասնաւորաբար սէր ցուցուր Ճշմարիտ  
Հաւատացեալներուն Քրիստոսի համար. վասն զի  
անոնք Քրիստոսի սեպհական ժողովուրդն են:  
Խնչու որ Քրիստոսի արիւնովը լուացուեցան ի-  
րենց մեղքերէն, ու անոր Հոգիովը սրբուեցան:  
Եւ աւելի ժիր ու ջերմեռանդ եղիք աս գործին  
մէջ ու սիրոյ համար ջանք ընելու մէջ. նայէ շատ  
անգամ հաւատոքի աչքով դէպի ան փառաւոր  
վարձքը՝ որ քու առջևեդ կը կենայ, դէպի յաւի-  
տենական փառքին մեծութիւնը՝ որ պիտի տրուի  
ան օրը, երբոր Քրիստոս հատուցում ընէ բոլոր  
ողորմութեան ու սիրոյ գործքերուն, որ իր ա-  
նունին համար եղած են, այնպէս՝ որպէս թէ յա-  
տուկ իրեն համար եղած են:


Աւեմն աս խորհրդովս արթնցած և աս յուսու-

վըս ժրացած, ջանք ըրէ որ աճիս զարգանաս դիւ-  
տութիւնով՝ սրբութիւնով՝ հաւատքով ու սիրով,  
Աստուծոյ վախովը և խոնարհութիւնով, և ամեն  
քրիստոնէական շնորհքներով: Են աս սրբութեան  
գործը առաջ տանելու համար՝ յոյսդ Աստուծոյ  
շնորհքներուն վրայ դիր սրտի մոօք գործածելով  
ան ամենը, որով կարելի է շնորհք ստանաս. ինչպէս  
աղօթք ընելով, եկեղեցի երթալով, Աստուծոյ  
խօսքը լսելով ու կարդալով, և անոր ամեն պատուի  
լանքները բոլոր սրտով կատարելով: Ճէտ որ այս-  
պէս վարես քու կեանքդ, անատենը Քրիստոսի մէջ  
հաստատուած և ամեն հոգեոր երանութիւնով  
լցուած մարդ մը կ'ըլլաս:

Դ. Տէր իմ, շնորհակալ եմ քեզմէ. Ճէպէտ  
կը տեսնեմ որ առջևս եղած գործը շատ մէծ է,  
բայց կը յուսամ որ Աստուծոյ օգնութեամբը պի-  
տի կարողանամ յառաջ տանիլ ան՝ մինչև վերջը:

Ե. Պէտք է որ դուն շատ դժուարութիւննե-  
րու ու շատ հակառակութիւններու համար պատ-  
րաստ ըլլաս. Վասն զի երկնից ճամբան խաչի  
ճամբայէ, որ շատ նեղութիւններ ունի տալու ան-  
կից անցնողին: Աշխարհը մարմինը ու սատանան  
զօրեղ թշնամիններ են, ու պինտ հաստատ միաբա-  
նած են իրաբու հետ: Մարդիկ ալ երբոր կը տեսնեն  
քեզ որ ան լայն ճամբայէն կը հեռանաս, որն որ ա-  
մենքը դէպի կորուստը կը տանի, ամենքն ալ քու  
վրադ կը յարձակին. և չէ թէ մինակ անհոգները  
ու ամբարիշտները քեզ ծաղը կ'ընեն ու կը նա-

խատեն, հապա ան քրիստոնեաներն ալ որ միայն  
անունով քրիստոնեայ են ու դրսուանց բարի կ'ե-  
րևան, քեզի դէմ կը հակառակին : «Քանզի շու-  
տով պիտի ըսեն իրենց սրտերնուն մէջ ի՞նչ որ  
փարիսեցիները կ'ըսէին՝ թէ Դուն մեր հասարակ  
ճամբան ձգելով ու ատելով՝ մեզ ամէնքս կը դա-  
տապարտես : » Երջը սատանան զարմանալի խո-  
րամանկութիւնով իր կամքին պէս կը շարժէ մար-  
մինը ու աշխարհը, և կամ հակառակութիւնով  
կամկեղծուպատիր քաղցրութիւնով կը ջանայ որ  
ճշմարիտ հաւատացեալները կորսնցունէ, և շատ  
ատեն ալ չար խորհուրդներ կը յարուցանէ անոնց  
մտացը մէջ՝ որ հաւատքին զօրութիւնը կործանէ,  
ու մեղաց իշխանութիւնը դարձեալ հաստատէ :  
Բայց դուն մի վախնար, վասն զի Աստուած ա-  
մենէն մեծ է : «Քրիստոս միշտ կենդանի է մեզի  
համար բարեխօսութիւն ընելու, և պատրաստ է  
փրկել անոնք՝ որ իրմով Աստուածոյ կու գան-  
Ուրեմն քեզի հետ եղողները շատ են՝ քան թէ  
անոնք որ քեզի հակառակ են : » Դուն քու ան-  
ձիդ թշնամի մի ըլլար, ու ընաւ բան մը կամ  
մէկը կարող չէ քեզի վնաս տալու : Բայց մի ըլ-  
լար մոքովդ ամբարտաւան, այլ վախցիր . քան-  
զի երանելի է ան մարդը՝ որ կը վախնայ միշտ :  
Առաջի, Եմ., 44 :



4997 -5005

2013

